ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

03.02.2025թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք.Երևան «01»12 2025թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու)՝ մի կողմից, և «ԹՐԵՆՍԼԱԲ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Գայանե Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 03.02.2025թ. կնքված N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետի «5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամ» թվով և բառերով:

1.2 Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N 1-ը և Հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

2 Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Համաձայնագրի Հավելված N 1-ը և Հավելված N 2-ը համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Թրենսլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 8, բն. 9
ՀՎՀՀ 00008519	h/h 2050022640391001
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ՝ 01036004
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝ Դավիթ Առաքելյան	Տնօրեն՝ Գայանե Սեդրակյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«03» փետրվարի 2025թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով պայմանագրի
« 01 » « 12 » 2025 թ. կնքված Համաձայնագիր N2-ի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	նվազագույն միավորի չափը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79111200/1	Թարգմանչական ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին, ժամերին և վայրերում: Ծառայությունը յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև 3 ժամ տևող միջոցառման ժամանակ իրականացվելու է մեկ թարգմանչի կողմից: Եթե թարգմանությունը իրականացվում է երկու ժամից ավելի, ապա Կատարողի կողմից ներգրավվում է 2 թարգմանիչ և համապատասխանաբար վճարը հաշվարկվում է երկու թարգմանչի համար սկսած՝ առաջին ժամից: Թարգմանչի տվյալները նախապես ներկայացվում են պատվիրատուին և գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաստատվում վերջինիս կողմից: Պատվիրատուի կողմից ծառայություն մատուցելու պատվերը Կատարողին է ուղարկվում թարգմանությունը սկսելու օրից՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Մինչև 3 ժամ տևողությամբ թարգմանության դիմաց վարձատրությունը հաշվարկվում է ըստ ժամերի, 3-5 ժամի դեպքում գործում է կես օրվա համար նախատեսված սակագինը, իսկ 5-8 ժամի դեպքում՝ կգործի ամբողջ օրվա համար նախատեսված սակագինը: Պատվիրատուն կարող է թարգմանությունը չեղարկել այն սկսելուց առավելագույնը 3 ժամ առաջ: Եթե 3 ժամից ավելի քիչ ժամանակից հետո պատվերը չեղարկվում է, ապա Պատվիրատուն վճարում է ներկայացված նախնական պատվերի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ թարգմանությունը տևում է ավելի պակաս քան նախապես պատվիրված էր, ապա Պատվիրատուն վճարում է նախապես պատվիրված ժամանակի համար: Եթե թարգմանությունը տևում է նախապես Պատվիրատուի կողմից նշված ժամանակից ավելի, ապա վճարումը կատարվում է փաստացի կատարած թարգամանության ժամանակահատվածի համար: Այն դեպքում երբ թարգմանությունը տևում է 2 ժամից ավելի, ապա կիրառվում է 2 թարգմանչի համար վճարման կանոնը:	դրամ	9000000	1		2025 թվականի հունվարի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը :

2	79111200/1	Թարգմանչական ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին, ժամերին և վայրերում: Ծառայությունը յուրաքանչյուր օրվա համար մինչև 2 ժամ տևող միջոցառման ժամանակ իրականացվելու է մեկ թարգմանչի կողմից: Եթե թարգմանությունը իրականացվում է երկու ժամից ավելի, ապա Կատարողի կողմից ներգրավվում է 2 թարգմանիչ և համապատասխանաբար վճարը հաշվարկվում է երկու թարգմանչի համար սկսած՝ առաջին ժամից: Թարգմանչի տվյալները նախապես ներկայացվում են պատվիրատուին և գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաստատվում վերջինիս կողմից: Պատվիրատուի կողմից ծառայություն մատուցելու պատվերը Կատարողին է ուղարկվում թարգմանությունը սկսելու օրվից՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Մինչեւ 3 ժամ տևողությամբ թարգմանության դիմաց վարձատրությունը հաշվարկվում է ըստ ժամերի: Թարգմանության 2-4 ժամի դեպքում, գործում է կես օրվա համար նախատեսված սակագինը, իսկ 4-8 ժամի դեպքում՝ կգործի ամբողջ օրվա համար նախատեսված սակագինը: Պատվիրատուն կարող է թարգմանությունը չեղարկել դրա սկսելուց՝ առավելագույնը 1 օր առաջ, այլապես Պատվիրատուն վճարում է ներկայացված նախնական պատվերի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ թարգմանությունը տևում է ավելի պակաս քան նախապես պատվիրված էր, ապա Պատվիրատուն վճարում է նախապես պատվիրված ժամանակի համար: Եթե թարգմանությունը տևում է նախապես Պատվիրատուի կողմից նշված ժամանակից ավելի, ապա վճարումը կատարվում է փաստացի կատարած թարգամանության ժամանակահատվածի համար: Այն դեպքում երբ թարգմանությունը տևում է 2 ժամից ավելի, ապա կիրառվում է 2 թարգմանչի համար վճարման կանոնը:	դրամ		1		2025 թվականի հունվարի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը :

Մասնակիցը գնային առաջարկին կից ցանկով, պետք է ներկայացնի թարգմանվող բոլոր լեզուները՝ ըստ գների (առանձին), օրինակ՝ 1.1, 1.2, 1.3; 2.1, 2.2, 2.3 և այլն:

Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում Մասնակիցը պետք է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի գրավոր հաստատում ամրագրման մասին: Հաստատումը պետք է ներկայացնել պատվիրատուի gk@parliament.am; էլ. փոստի հասցեին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Թրենսլաբ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 8, բն. 9
h/h 2050022640391001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01036004
Տնօրեն՝ Գայանե Սեդրակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«03» փետրվարի 2025թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով պայմանագրի
« 01 » « 12 » 2025 թ. կնքված Համաձայնագիր N2-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	**դիմաց վճարումները** նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-2	79111200/1	Ներկայացուցչական ծառայություններ /4237/	1500000	1500000	1500000	2250000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	9000000	9000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Թրենսլաբ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 8, բն. 9
h/h 2050022640391001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01036004
Տնօրեն՝ Գայանե Սեդրակյան

(ստորագրություն)
Կ.Տ.